

ՇՈՒՐՋԵՐԿՐՅԱ ՃԱՆԱՊԱՐՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵԾԱՆԻՎՈՎ, ԹԵ «ԽԵՆՆԹ՝ ՄՈՒՈՐԱԿ

Այո՛, գարնանալի է, երբ տեսնում ես իրենց երազանքին հասնելու մոլուցքով ապրող մարդկանց: Մարդիկ, ովքեր տարիներ առաջ են պլանավորել իրենց «ապագա-երազանքը», ովքեր ջանք չեն խնայել և վտանգի են ենթարկել իրենց կյանքը՝ անմոռաց ու խենթ ապրելու համար: Արիան և Սավիեր, մարդիկ, ովքեր ունեն բարձրագույն կրթություն և աշխատանք Գերմանիայում ու Ֆրանսիայում, բայց իրենց «Առասպելի» հետևից են գնում: ...Տեսնել ու սովորել տարբեր երկրների ու ժողովուրդների սովորույթները, տարածել տարբեր ժողովուրդներին հատուկ ավանդույթներն՝ աշխարհով մեկ, և, վերջապես, ամենակարևորը՝ տուն տանել աշխարհի ամենաբարի երևույթը. ահա, թե որն է երիտասարդների նպատակը:

Նախրուհի ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԽՏ-3

Հունվարի 17-ին, ՀՊԱՀ արտաքին կապերի դեպարտամենտում հանդիպեցին մարդկանց, ովքեր որոշել էին փոխել իրենց կյանքի «միապաղաղ» հունը: Նրանք շատ անկաշկանդ ու հաճելի մթնոլորտ տեսեցին, որը նպաստեց, որ շփումը անմիջական լինի: ...Չնայած բազում դժվարություններին, նրանք ունեն նպատակ և դրան հասնելու կամք...

Անի ՆԱԴԱՐՅԱՆ ԽՏ-3

Պարզվում է, կյանքում փոփոխություններ մտցնելու և այն ավելի հետաքրքիր դարձնելու համար պետք չեն մեծ «ճոխություններ» միայն հեծանիվ, վրան, մի փոքր բյուջե և պատրաստականություն՝ պարզ կյանքով ապրելու և դժվարությունները հաղթահարելու: Ձրույցից տեղեկացանք, որ տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների հետ շփումը, նրանց մասին ավելին իմանալը, արկածների հանդիպելը իրենց մեծ բավականություն է պատճառում և օրախոսությամբ են պատմում այդ մասին:

Աշխեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԽՏ-3

Սկզբում համոզված էի, որ Արիանը և Սավիերը խենթ են: Ի՞նչ է, բան ու գործ չունեն, որ օրերով հեծանիվ են քշում: Սակայն մեր զրույցի 45 րոպեները ամբողջությամբ փոխեցին իմ հայացքները, թե՛ իրենց, թե՛ աշխարհի նկատմամբ: ...Հնարավորության դեպքում շատ կցանկանայի նրանց ներկայացնել Հայաստանը, որքան հասկացա նրանք դեռ այնքան էլ տպավորություններով լի չէին հազարամյակներ ապրած մեր ժողովրդի մասին:

Սոնա ԲԼԲՈՒՅԱՆ ԽՏ-3

...Իրենց ճանապարհորդությունը սկսելով մոտ 8 ամիս առաջ, անցել են 7 երկիր և դեռ 8-ն էլ պետք է անցնեն Հայաստանից հեռանալուց հետո: ...Սեր ժողովրդի հյուրասիրությունը նրանց մեծ գարնանք էր պատճառել: Չմոռացան նշել նաև մեր լավաշի յուրահատկությունը...

Արիի ԴԱՎԹՅԱՆ ԽՏ-3

Հին Արևելքը դեռ կա ու մնում է խորհրդավոր ու չբացահայտված և դեռ մեծ է անդունդը Արևելքի ու Արևմուտքի միջև: Դեռ կարծրացած ավանդույթներն ու եվրոպական ազատամտությունը չեն համակերպվել, դեռ արևելյան հյուրասիրությունը ապշեցնում է «աչքաբաց եվրոպացիներին» պարզամտությամբ, անկեղծությամբ, բացարտությամբ: Նրանք Կոլումբոսի մեծա շնորհատան փնտրելով Ամերիկա չհայտնագործեցին, բայց կարողացան հաղթահարել խոչընդոտներ, որոնց շնորհիվ ավելի հեշտ կլիմի պայքարել ու հաղթահարել կյանքի դժվարությունները:

Վահանուշ ԴԱՎԹՅԱՆ ԽՏ-3

Հուսով եմ, նրանք կկարողանան հասնել իրենց նպատակին՝ ճիշտ պատկերացում կազմել երթուղում ընդգրկված 15 երկրների մշակույթի, սովորույթների, ապրելակերպի, ճարտարապետության, պատմության մասին: Մանրամասն տեղեկությունների համար, կարող եք օգտվել նրանց ինտերնետային կայքից:

Տայգուիկ ՊՈՂՈՍՅԱՆ ԽՏ-3



ամ
լո-
րի

Ճածորի
չակա-
րծակցի
ի հետ,
սշկանդ
մներից:
վրոման
ր կապի
ունեցող

աճյուրի
արվեց
ացման
եսպան
նության
ա կ ա ն

ւթյամբ
տակով
ունների
մբիոնի
ացման
նտրոնի
լցելու և
շտյանը
րցերին
կաների

Հ Լոռու
տրատի
ծում:
ունքում
իրների
ստելով
արման

ԲՅԱՆ
ճյուղի
ապար